Նինա Սեդրակյան

ՄՈՍԿՎԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ (2010-2017 ԹԹ.)[1]

Բանալի բառեր. մոսկվահայեր, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, Սփյուռք, գիտություն, կրթություն, ոլորտ, գիտնական, սոցիոմշակութային ներգրավվածություն, մարդահամար:

20-րդ դ. վերջում Խորհրդային միության փլուզումը հայկական «նոր սփյուռք»[2]-ի ձևավորման սկիզբ դրեց, որում իր ուրույն տեղը զբաղեցրեց Ռուսաստանի Դաշնության հայ սփյուռքը: 1990-ականներից ՀՀ-ի հայության՝ դեպի ՌԴ թափ առած արտագաղթը համալրեց մի քանի պատմական շերտ ունեցող ռուսահայ համայնքները՝ նոր որակներ հաղորդելով վերջիններիս: Հիմնականում սոցիալական ապահով կեցության փնտրտուքների ճանապարհը բռնած մեր հայրենակիցները, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում գիտակրթական ոլորտի ներկայացուցիչները, նախընտրում էին թե՛ հարավային ու կենտրոնական ՌԴ-ի հայահոծ շրջանները, թե՛ հեռավոր արևելյան մարզերը[3]: Անկախ ամեն ինչից, ՌԴ-ի մայրաքաղաք Մոսկվան, որը 2000-ական թթ. սկսեց մեգապոլիսին հատուկ զարգացման տեմպեր արձանագրել[4], հայության գիտակրթական ներուժի գործունեության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում: Այն, ինչպես և խորհրդային տարիներին, ավելի շատ ձգում էր հասարակական-քաղաքական, կրթության և գիտության, մշակույթի, սպորտի, մեդիա, գործարար ոլորտում հաջողություններ արձանագրած մեր հայրենակիցներին: Հարցը բավականին ծավալուն է և մեկից ավելի ուսումնասիրությունների առարկա կարող է հանդիսանալ: Այնուամենայնիվ, կարևորելով մեր հայրենակիցների՝ Մոսկվայի գիտական և կրթական ասպարեզում ունեցած դերակատարումը, որը նաև համառուսաստանյան նշանակություն է ունեցել, որպես մեր ուսումնասիրության օբյեկտ ենք ընտրել 2000-ական թթ. գիտակրթական ոլորտը ներկայացնող մոսկվահայերին: Նշված ոլորտներում աչքի ընկած մեր հայրենակիցներին անհատապես դիտարկելու և համալիր եզրակացություններ կատարելու համար է, որ սույն ուսումնասիրության նպատակ ենք սահմանել 2000-ականներին Մոսկվայի գիտակրթական կյանքին հայերի ներգրավվածության վիճակի լուսաբանումը:

Սկսենք վիճակագրական տվյալների դիտարկումներից, որոնք հիմնված են բացառապես պաշտոնական նյութի վրա: Այդ տվյալները, անշուշտ, չեն կարող ամբողջությամբ ներկայացնել իրական պատկերը: Այնուամենայնիվ, պաշտոնական աղբյուրների հրապարակած տվյալները վիճակագրական պատկերի մեր հիմնական փաստագրական հենքն են հանդիսանում: ՌԴ-ում 2000-ական թթ. տեղի է ունեցել համադաշնային բնույթի երկու մարդահամար. առաջինը՝ 2002 թ.[5], իսկ երկրորդը՝ 2010 թ.[6]: Ըստ ա-

---

Հոդվածը ներկայացվել է 30.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բ.գ.թ. Գայանե Մխիթարյանի կողմից (07.06.2019 թ.), ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և ՀՀՌՀ (ՌԴ) գիտական համատեղ ծրագրի շրջանակներում (թեմա՝ «Մոսկվայի հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները XX դ. վերջին և XXI դ. սկզբին», ծածկագիր՝ 18RF-108):

[2] Տե՛ս Կարապետյան Ռ., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը, Ե., 2013, էջ 74-103: Տե՛ս նաև Եղիազարյան Ա., Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր» հանդես, թիվ 2, Ե., 2014, էջ 46:

[3] ՌԴ-ում բնակվող ՀՀ քաղաքացիների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության հրապարակած վիճակագրական տվյալները ներառում են 2011-2017 թթ. ընկած ժամանակահատվածը // URL: http://www.smsmta.am/?menu_id=129, 15.04.2019:

[4] Մանրամասն տե՛ս Сухарева Е., Особенности развития Москвы как глобального мегаполиса, «Век глобализации», Выпуск №1(11), Москва, 2013, с. 100-108.

[5] Տե՛ս «Информационные материалы об окончательных итогах Всероссийской переписи населения 2010 года» // URL: http://www.gks.ru/free_doc/new_site/perepis2010/perepis_itogi1612.htm, 15.04.2019.

[6] Տե՛ս «Всероссийская перепись населения 2002 года: Национальный состав населения» //

ռաջինի՝ ՌԴ-ում բնակվում էր 1130491 հայ, որից 805621-ը՝ քաղաքաբնակ[1], իսկ ըստ երկրորդի՝ 1182388 հայ, որից 816375-ը՝ քաղաքաբնակ[2]: Այսինքն՝ երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում հայության թիվը ՌԴ-ում աճել է 51897-ով: Ինչ վերաբերում է Մոսկվային, ապա պատկերը հետևյալն է. 2002 թ. այնտեղ բնակվում էր 124425 հայ[3], իսկ 2010 թ.՝ 17959-ով պակաս՝ 106466[4]: Այս տվյալների կողքին, որոնք վերաբերում են քաղաքում գրանցված հայերին, շրջանառվում է նաև Մոսկվայում ոչ պաշտոնական տվյալներով 500000 հայի առկայության տեսակետը, որը արտահայտել են քաղաքի հայության ներկայացուցիչները[5]:

Այսօրինակ թվային տարբերությունների կողքին հետաքրքիր է մատնանշել, որ թե՛ 2002 թ., թե՛ 2010 թ. մարդահամարների տվյալներով Մոսկվայի շուրջ 170[6] ազգությունների թվում հայերը թվաքանակով զբաղեցնում են չորրորդ տեղը ռուսներից, ուկրաինացիներից և թաթարներից հետո:

Մոսկվայում հայերի սոցիոմշակութային լայն ներգրավվածության[7], ինչպես նաև ի մասնավորի գիտակրթական ոլորտում նրանց ունեցած ձեռքբերումների վերաբերյալ իրականացրած մշտադիտարկումների արդյունքում վեր հանված աղբյուրների թվում հարկ ենք համարել ուշադրություն դարձնել երկուսին: Առաջինը երկու հրապարակումներ են, որոնք լույս են տեսել հետխորհրդային ռուսալեզու հայկական տիրույթում մեծ տարածում ունեցող «Նոյյան Տապան» թերթում, իսկ երկրորդը ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի (այսուհետ՝ ՌԲԳԱ) «Հայտնի գիտնականներ» համացանցային հանրագիտարանն է: Առաջին հրապարակումը[8], համաձայն թերթի հարցմանը մասնակցած 9650 ընթերցողների, ներկայացնում է ՌԴ-ում 2011 թ. առավել հայտնի 100 հայերի անվանացանկը, իսկ երկրորդ հրապարակումը՝[9] 2013 թ. անվանացանկը, որը կազմվել է թերթի հարցմանը մասնակցած 6850 ընթերցողների կարծիքների հիման վրա: Երկու հրապարակումներին կից մեծ թվով քննարկումներ կան, որոնցում օգտատերերը տա-

---

URL: http://www.perepis2002.ru/ct/doc/TOM_04_01.xls, 15.04.2019.

[1] Տե՛ս «Всероссийская перепись населения 2002 года: Национальный состав населения» // URL: http://www.perepis2002.ru/ct/doc/TOM_04_01.xls, 15.04.2019.

[2] Տե՛ս «Информационные материалы об окончательных итогах Всероссийской переписи населения 2010 года: национальный состав населения РФ» // URL: https://bit.ly/2Eby7A8, 15.04.2019.

[3] Տե՛ս «Всероссийская перепись населения 2002 года: население по национальности и владению русским языком по субъектам РФ» // URL: https://bit.ly/PI9mQB, 15.04.2019.

[4] Տե՛ս «Информационные материалы об окончательных итогах Всероссийской переписи населения 2010 года: национальный состав населения по субъектам РФ» // URL: https://bit.ly/2VyOaxO, 15.04.2019.

[5] Տե՛ս Եղիազարյան Ա., Սոլոպովա Օ., Մոսկվայի Հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները XX դ. վերջին և XXI դ. սկզբին (ընդհանուր դիտարկումներ), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2018, էջ 39:

[6] Մոսկվայի կառավարության Ազգային քաղաքականության և միջտարածաշրջանային կապերի կոմիտեի ղեկավարի պաշտոնակատար Մ. Սոլոմոնցևը 2010 թ. ռուսական թերթերից մեկին տված հարցազրույցում նշել է, որ Մոսկվայում ապրող ազգությունների թիվը հասնում է 170-ի: Տե՛ս Образкова М., 170 национальностей в одном городе, «Независимая газета», Москва, 08.10.2010 // URL: http://www.ng.ru/regions/2010-10-08/5_we.html, 15.04.2019.

[7] Մոսկվայում հայերի սոցիոմշակութային ներգրավվածության հարցերի շուրջ արդի հայ սփյուռքագիտության մեջ պարբերաբար տեսական և գիտագործնական ուսումնասիրություններ են իրականացվել: Տե՛ս Арутюнян Ю., Об армянской диаспоре в России: этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Е., 2011, с. 81-101; Долбакян Э., Армянская община Москвы: история, современное состояние, проблемы, «Общероссийская и национальная идентичность», материалы международной научно-практической конференции (19-22 апреля 2012 г.), Пятигорск, 2012, с. 254-265 // URL: http://russia-armenia.info/node/4170, 16.04.2019; Եղիազարյան Ա., Սոլոպովա Օ., Մոսկվայի Հայկական սփյուռքի …, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2018, էջ 31-44; «Москва Армянская: статьи, Армянский музей Москвы и культуры наций» // URL: https://bit.ly/2VNjhWk, 16.04.2019.

[8] Տե՛ս «100 известных армян, проживающих в России (2011)», газета «Ноев Ковчег», № 2 (185), февраль (1–15), 2012 г. // URL: https://noev-kovcheg.ru/mag/2012-02/3047.html, 16.04.2019.

[9] Տե՛ս «100 известных армян, проживающих в России (2013)», газета «Ноев Ковчег», № 3 (233), февраль (16–28), 2014 г. // URL: https://noev-kovcheg.ru/mag/2014-03/4351.html, 16.04.2019.

ռակարծիք են՝ նշված ցանկերի հետ կապված: Այնուամենայնիվ, նման հեղինակավոր թերթի հիշյալ հրապարակումները, անկախ երկու ցուցակներում առկա հայազգի գործիչների նկատմամբ համայնքի մեր հայրենակիցների արտահայտած դրական կամ բացասական կարծիքներից, արտահայտում են ռուսահայ տիրույթի այդ տարիների իրականությունը, որի հիմնավորումներին մենք ականատես եղանք համացանցում հասցեական մշտադիտարկումների ժամանակ: Նրանց ճանաչելու և համապատասխան եզրակացություններ անելու համար իրականացված մեր մշտադիտարկումների ընդհանրական արդյունքներն ու աղբյուրագիտական հենքը ներկայացնում ենք ստորև:

2011 թ. Ռուսաստանում 100 անվանի հայերից 79-ը, իսկ 2013 թ.՝ 78-ը ներկայացնում են Մոսկվան: Հետաքրքիր է, որ 2011 թ. 79-ը մոսկվահայերից 55-ը հայտնվել են նաև 2013 թ. ցանկում, փոխարենը 2013 թ. նոր անունները 23-ն են: Ցուցակներում հայտնված առավել հայտնի մոսկվահայերը հիմնականում ներկայացնում են գիտակրթական, գործարար, հասարակական-քաղաքական, մեդիա, մշակույթի, սպորտի ոլորտները: Նրանց թվում քիչ չեն շատերիս հայտնի անունները, սակայն մեծ թիվ են կազմում նաև հայկական լայն շրջանակներին պակաս ծանոթները: Այսպես, 2011 թ. ցուցակում ներկայացված գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներից **Ալեքսանդր Օհանի Չուբարյանը**[1] պատմաբան է, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (այսուհետ՝ ՌԳԱ) ակադեմիկոս, ՌԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, **Արմաիս Ալբերտի Կամալովը**[2] ուրոլոգ է, բ.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ անդամ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) արտասահմանյան անդամ, Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի (այսուհետ՝ ՄՊՀ) «Համալսարանական հիվանդանոց» բժշկական գիտակրթական կենտրոնի տնօրեն, **Բագրատ Գեղամի Ալեքյանը**[3] սիրտանոթային վիրաբույժ է, բ.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ա.Ն. Բակուլևի անվան սիրտանոթային վիրաբուժության գիտական կենտրոնի ռենտգենէնդովասկուլյար ախտորոշման և բուժման բաժանմունքի ղեկավար, **Էմանուիլ Եղիայի Դոլբակյանը**[4] նեյրոֆիզիոլոգ էր, բ.գ.թ., 1988 թվականից՝ Մոսկվայի հայ համայնքի ակտիվ անդամ, հասարակական գործիչ, 1999 թվականից՝ «Արարատ» հայկական մշակութային և կրթական միության հիմնադիր ղեկավար, մահացել է 2015 թ., **Լեյլա Վլադիմիրի Ադամյանը**[5] մանկաբարձ-գինեկոլոգ է, բ.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս, ՌԲԳԱ անդամ, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, զբաղեցնում է ակադեմիկոս Վ. Կուլակովի անվան մանկաբարձության, գինեկոլոգիայի և պերենտոլոգիայի ազգային բժշկական հետազոտական կենտրոնի փոխտնօրենի պաշտոնը, **Լև Արամի Փիրուզյանը**[6] կենսաֆիզիկոս էր, բ.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս, Ն.Ն. Սեմյոնովի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ֆիզիոլոգիական քիմիայի տեսական խնդիրների ամբիոնի վարիչ, ՌԳԱ ֆիզիկաքիմիական դեղաբանության տեսական խնդիրների կենտրոնի տնօրեն, մահացել է 2013 թ., **Հենրի Տիգրանի Սարդարյանը**[7] քաղաքագետ է, ք.գ.թ., Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտի (այսուհետ՝ ՄՀՄՊԻ) կառավարման և քաղաքականութ-

[1] Տե՛ս Чубарьян А. О.: Институт всеобщей истории РАН // URL: http://igh.ru/employees/1, 16.04.2019.

[2] Տե՛ս Камалов А. А., Медицинский научно-образовательный центр МГУ имени М.В.Ломоносова// URL: http://mc.msu.ru/about/doctors/doctor/?ID=404, 16.04.2019.

[3] Տե՛ս Алекян Б. Г.: Национальный медицинский исследовательский центр хирургии имени А. В. Вишневского // URL: https://bit.ly/2HBbKpC, 17.04.2019; Алекян Б. Г.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2JE6YtS, 17.04.2019.

[4] Տե՛ս Долбакян Э. Е.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2WfjTIx, 17.04.2019.

[5] Տե՛ս Ադամյան Լ. Վ., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան //
URL: https://bit.ly/2HOOJyH, 16.04.2019; Адамян Л. В.: МГМСУ // URL: https://bit.ly/2VyN2dw, 17.04.2019, Адамян Л. В.: ФГБУ «Национальный медицинский исследовательский центр акушерства, гинекологии и перинатологии имени академика В.И. Кулакова» министерства здравоохранения РФ //
URL: http://ncagp.ru/index.php?_t8=228, 17.04.2019.

[6] Տե՛ս Пирузян Л. А.: ИХФ РАН // URL: https://bit.ly/2WS50ck, 17.04.2019; Փիրուզյան Լ. Ա., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան // URL: https://bit.ly/2VzIDae, 17.04.2019:

[7] Տե՛ս Сардарян Г. Т.: МГИМО // URL: https://mgimo.ru/people/sardaryan/, 18.04.2019.

յան ֆակուլտետի դեկան, **Միխայիլ Ասլանի Պողոսյանը**[1] ավիակոնստրուկտոր է, տեխ. գ.դ., դոցենտ, ՌԳԱ ակադեմիկոս, Մոսկվայի Ավիացիոն ինստիտուտի ռեկտոր, **Յուրի Ցոլակի Հովհաննիսյանը**[2] ֆիզիկոս է, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս, Գ.Ն. Ֆլերովի անվան ատոմային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, **Ռոբերտ Վաչագանի Ենգիբարյանը**[3] իրավագետ է, ի.գ.դ., պրոֆեսոր, ՄՀՄՊԻ կառավարման և քաղաքականության ֆակուլտետի գիտական ղեկավար, **Սամվել Սամվելի Գրիգորյանը**[4] մաթեմատիկոս էր, ֆ.գ.դ., ՄՊՀ վաստակավոր պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս, մահացել է 2015 թ., **Սեդա Վահանի Գալոյանը**[5] մանկավարժ է, մանկ. գ.թ., ՌԴ վաստակավոր ուսուցիչ, Մոսկվայի Լազարևների անվան թիվ 2042 դպրոցի տնօրեն, **Սերգեյ Օհանի Կալենջյանը**[6] տնտեսագետ է, տ.գ.դ., ՌԴ վաստակավոր տնտեսագետ, ՌԴ կառավարությանն առընթեր ազգային տնտեսության ակադեմիայի Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի տնօրեն, **Օսկիան Արշակի Գալուստյանը**[7] իրավագետ է, ի.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ ՆԳՆ գեներալ-մայոր, ՆԳՆ պատվավոր աշխատակից, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի իրավունքի ամբիոնի դասախոս, **Արթուր Նիկոլայի Չիլինգարովը**[8] բևեռախույզ է, աշխ. գ.դ., ՌԳԱ թղթակից անդամ, ՌԴ Պետական Դումայի պատգամավոր, **Արմեն Բագրատի Սմբատյանը**[9] արվեստագետ է, արվեստագիտության դոկտոր, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, ԱՊՀ անդամ երկրների հումանիտար համագործակցության հիմնադրամի գործադիր տնօրեն, **Գարեգին Աշոտի Թոսունյանը**[10] իրավագետ է, ի.գ.դ., պրոֆեսոր, ֆիզմաթ. գ.թ., ՌԳԱ թղթակից անդամ, Ռուսական բանկերի ասոցիացիայի նախագահ, **Իգոր Արամի Տեր-Հովհաննիսյանը**[11] մարմնամարզիկ-մանկավարժ է, մանկ. գ.թ., Ֆիզիկական կուլտուրայի Մոսկվայի պետական ակադեմիայի թեթև աթլետիկայի ամբիոնի պրոֆեսոր, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, **Հովհաննես Արմենակի Օհանյանը**[12] տեխ. գ.դ., ՌԴ Պետական Դումայի պատգամավոր է, **Սիմոն Գարեգինի Կագիյանը**[13] լրագրող է, փ.գ.դ., «Նոյյան Տապան» թերթի քաղաքական մեկնաբան:

Համապատասխանաբար, 2013 թ. ցուցակում նախորդի համեմատ գիտակրթական ոլորտը ներկայացնող նոր հայտնված մոսկվահայերից **Աբել Գյոզի Աղանբեգյանը**[14] տնտեսագետ է, տ.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս, Բարձրագույն կառավարման դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՌԴ կառավարությանն առընթեր ժողովրդական տնտեսության ակադեմիայի տնտեսագիտական տեսության և քաղաքականության ամբիոնի վարիչ, **Գրիգոր Արտուշի Ախինովը**[15] տնտեսագետ է, տ.գ.դ., ՄՊՀ

---

[1] Տե՛ս Погосян М. А.: Московский авиационный институт // URL: https://bit.ly/2Ez1CvM, 18.04.2019; Погосян М. А.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2VLQGWa, 18.04.2019.

[2] Տե՛ս Оганесян Ю. Ц.: ОИЯИ // URL: https://bit.ly/2JDSr1j, 18.04.2019; Հովհաննիսյան Յ. Ց., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան // URL: https://bit.ly/2HDyWCE, 18.04.2019:

[3] Տե՛ս Енгибарян Р. В.: МГИМО // URL: https://mgimo.ru/people/engibaryan/, 18.04.2019; Ենգիբարյան Ռ. Վ., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան // URL: https://bit.ly/2EuozAr, 18.04.2019:

[4] Տե՛ս Գրիգորյան Ս. Ս., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան //
URL: https://bit.ly/2QbSWAf, 18.04.2019:

[5] Տե՛ս Галоян С. В.: ГБОУ Школа № 2042, Москва // URL: https://bit.ly/2EDje9Y, 18.04.2019.

[6] Տե՛ս Календжян С. О.: Учёные России // URL: http://www.famous-scientists.ru/5571/, 18.04.2019; Календжян С. О.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2LVr5Wv, 18.04.2019.

[7] Տե՛ս Галустьян О.А.: МПГУ // URL: http://mpgu.su/scientists/galustyan-okian-arshakovich/, 18.04.2019.

[8] Տե՛ս Чилингаров А. Н.: Государственная Дума // URL: http://duma.gov.ru/duma/persons/99100416/, 18.04.2019; Чилингаров А. Н.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2VxfbS9, 18.04.2019.

[9] Տե՛ս Смбатян А. Б.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2YBDakT, 18.04.2019.

[10] Տե՛ս Президент АРБ // URL: https://arb.ru/arb/management/prezident-arb/, 18.04.2019; Թոսունյան Գ. Ա., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան // URL: https://bit.ly/2WeFmBm, 18.04.2019:

[11] Տե՛ս Тер-Ованесян И. А.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2LUvn05, 19.04.2019.

[12] Տե՛ս Оганян О. А.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/30yhurC, 19.04.2019.

[13] Տե՛ս Кагиян С. Г.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2Jv6Htc, 19.04.2019.

[14] Տե՛ս Аганбегян А. Г.: Официальный портал ИЭОПП СО РАН // URL https://bit.ly/2KdQdp1, 19.04.2019; Аганбегян А. Г.: МШЭ МГУ // URL: https://bit.ly/2VNZypC, 19.04.2019; Աղանբեգյան Ա.Գ., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան // URL: https://bit.ly/2HTRkHs, 19.04.2019:

[15] Տե՛ս Ахинов Г. А.: Экономический факультет МГУ // URL: https://bit.ly/2QqX3Zm, 19.04.2019.

տնտեսագիտության ֆակուլտետի Սոցիալական ոլորտի տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր, **Գրիգորի Արկադիի Գաբրիելյանը**[1] երկրաբան է, երկրաբանահանքային գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԲԳԱ ակադեմիկոս, «Գեոսերվիս» գիտա-տեխնիկական խորհրդատվական ընկերության տնօրեն, **Էդվարդ Արամի Աբգարյանը**[2] փիլիսոփա է, փ.գ.դ., պրոֆեսոր, ինը միջազգային և ռուսական ակադեմիաների ակադեմիկոս, Մոսկվայի բիզնեսի և իրավունքի ինստիտուտի ռեկտոր, **Կարինա Լևոնի Մելիք-Փաշաևան**[3] արվեստագետ է, արվեստագիտության դոկտոր, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, Ռուսական թատերական արվեստի ակադեմիայի ռեկտոր, Երաժշտության և բեմական արվեստի պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր, **Ռոլան Գուրգենի Մարտիրոսովը**[4] ավիակոնստրուկտոր է, ՌԴ աշխատանքի հերոս, ՍՈՒ-34 ռազմական օդանավի գլխավոր կոնստրուկտորը, **Ռուդոլֆ Միխայիլի Տեր-Սարկիսովը**[5] տեխ. գ.դ., ՌԴ հանքարդյունաբերության ակադեմիայի լիիրավ անդամ, «Գազպրոմ» ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ:

Վերոհիշյալ երկրորդ աղբյուրը՝ ՌԲԳԱ «Հայտնի գիտնականներ» համացանցային հանրագիտարանը Մոսկվայում ապրող և գիտակրթական ոլորտը ներկայացնող 30 հայ է հիշատակում: Նրանցից ընդամենը 5-ն են նշվել առաջին աղբյուրում՝ «Նոյյան Տապան» թերթի երկու հրապարակումներում: Այսպիսով, մյուս 25 հայազգի մոսկվաբնակ գիտնականներից **Տատյանա Սուրենի Կյուրեղյանը**[6] արվեստաբան է, արվեստագիտության դոկտոր պրոֆեսոր, **Գաբրիել Միխայիլի Մարկոսյանը**[7] պատմաբան է, պ.գ.թ., **Իգոր Արտեմի Աբովյանը**[8] բժիշկ է, բ.գ.դ., պրոֆեսոր, «Առողջություն» ախտորոշիչ կենտրոնի գլխավոր բժիշկ, **Առնոլդ Արամի Ադամյանը**[9] բժիշկ է, բ.գ.դ., պրոֆեսոր, ղեկավարում է Ա.Վ. Վիշնևսկու անվան վիրաբուժության ինստիտուտի մասնագիտացված բաժանմունքը, **Ռուբեն Թադևոսի Ադամյանը**[10] բժիշկ է, բ.գ.դ., պրոֆեսոր, Ակադեմիկոս Բ. Վ. Պետրովսկու անվան վիրաբուժության ռուսական գիտական կենտրոնի վերականգնողական և պլաստիկ վիրաբուժության բաժանմունքի ղեկավար, **Տատյանա Ալբերտի Այվազյանը**[11] բժիշկ է, բ.գ.դ., պրոֆեսոր, **Մանվել Սեդրակի Ապերյանը**[12] ատամնաբույժ-վիրաբույժ է, բ.գ.թ., ՌԲԳԱ պրոֆեսոր, ՌԴ վաստակավոր բժիշկ, ՌԴ բժշկական և տեխնիկական գիտությունների ակադեմիայի անդամ, թիվ 4 ստոմատոլոգիական կլինիկայի գլխավոր բժիշկ, **Ալեքսեյ Սուրենի Գրիգորյանը**[13] վիրաբույժ է, բ.գ.դ., պրոֆեսոր, Առողջապահության և սոցիալական զարգացման նախարարության Ստոմատոլոգիայի և դիմածնոտային վիրաբուժության կենտրոնական հետազոտական ինստիտուտի ընդհանուր պաթոլոգիայի բաժանմունքի ղեկավար, **Աշոտ Վլադիմիրի Քամալյանը**[14] դիմածնոտային վիրաբույժ է, բ.գ.թ., «Դենթալ իմպլանտ» ատամնաբուժական կենտրոնի գլխավոր տնօրեն, **Արա Լեոնիդի Հունանյանը**[15] մանկաբարձ-գինեկոլոգ է,

---

[1] Տե՛ս Габриэлянц Г. А.: Большая биографическая энциклопедия // URL: https://bit.ly/2X9hc8D, 19.04.2019.

[2] Տե՛ս Абгарян Э. А.: Лучшие педагоги России // URL: https://bit.ly/2W34sUs, 19.04.2019; Աբգարյան Է.Ա., «Հայազգ» հիմնադրամի հանրագիտարան // URL: https://bit.ly/2K65l7y, 19.04.2019:

[3] Տե՛ս Мелик-Пашаева К. Л.: ГИТИС // URL: https://bit.ly/2VOl65f, 19.04.2019.

[4] Տե՛ս Мартиросов Р. Г.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2HYriCT, 20.04.2019; Мартиросов Р. Г.: Герои Страны // URL: https://bit.ly/2X9WFRs, 20.04.2019.

[5] Տե՛ս Тер-Саркисов Р. М.: РГУ нефти и газа им. И. М. Губкина //
URL: https://bit.ly/2YOO5b2, 20.04.2019; Тер-Саркисов Р. М.: Энциклопедия фонда «Хайазг» // URL: https://bit.ly/2MbYNqJ, 20.04.2019.

[6] Տե՛ս Кюрегян Т. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2Wrs0BP, 21.04.2019.

[7] Տե՛ս Маркосян Г. М.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2VUAzkk, 21.04.2019.

[8] Տե՛ս Абоян И. А.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2K8IUyx, 21.04.2019.

[9] Տե՛ս Адамян А. А.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2YWOHvx, 21.04.2019.

[10] Տե՛ս Адамян Р. Т.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2YMjMBQ, 21.04.2019.

[11] Տե՛ս Айвазян Т. А.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2XjybVG, 21.04.2019.

[12] Տե՛ս Аперян М. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2Qtw6Uz, 21.04.2019.

[13] Տե՛ս Григорьян А. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2wrsj0R, 22.04.2019.

[14] Տե՛ս Камалян А. В.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2HGQajA, 22.04.2019.

[15] Տե՛ս Унанян А. Л.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2QtAQto, 22.04.2019.

բ.գ.դ., Ի.Մ. Սեչենովի անվան Մոսկվայի բժշկական ակադեմիայի բժիշկների հետբուհական մասնագիտական կրթության ֆակուլտետի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր և գիտական քարտուղար, **Անտոն Սենեքերիմի Աբրահամյանը**[1] զոհինժեներ է, գյուղ. գ.դ., պրոֆեսոր, ՌԲԳԱ ակադեմիկոս, կենդանիների կերակրման, կերի պատրաստման տեխնոլոգիաների և սննդային հավելումների օգտագործման, անասունների աուդիտի փորձագետ-խորհրդատու, **Միխայիլ Վլադիմիրի Մեծատունյանը**[2] տեղեկատվական անվտանգության մասնագետ է, տեխ. գ.թ., Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի դոցենտ, **Ֆիլարետ Գուրգենի Նահատակյանը**[3] ավիակոնստրուկտոր է, տեխ. գ.դ., Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի պրոֆեսոր, **Գագիկ Սերգեյի Օհանջանյանը**[4] տեխ. գ.թ., ՌԲԳԱ պրոֆեսոր է, **Վլադիմիր Արշալույսի Չոբանյանը**[5] հրթիռագետ է, տեխ. գ.դ., պրոֆեսոր, ՌԴ գիտության և տեխնոլոգիայի վաստակավոր գործիչ, ՌԴ ՁՈՒ գեներալ-լեյտենանտ, **Սերգեյ Լևոնի Աթանասյանը**[6] մաթեմատիկոս է, ֆիզմաթ. գ.թ., պրոֆեսոր, **Պավել Սամվելի Գևորգյանը**[7] ֆիզմաթ. գ.թ., Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՌԲԳԱ թղթակից անդամ, **Լյալյա Վարդանի Կանսուզյանը**[8] փիլիսոփա է, փ.գ.դ., դոցենտ, Մոսկվայի Ն.Է. Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարանի Սոցիոլոգիայի և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, Սոցիոլոգիական և հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, **Ելենա Նիկոլայի Գևորգյանը**[9] տնտեսագետ է, տ.գ.դ., պրոֆեսոր, Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի գիտական գծով պրոռեկտոր, **Միքայել Անուշավանի Դավթյանը**[10] տնտեսագետ է, տ.գ.դ., պրոֆեսոր, Աշխատանքի և սոցիալական հարաբերությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության, ֆինանսների և ապահովագրության ամբիոնի վարիչ, **Վլադիմիր Սերգեյի Մխիթարյանը**[11] տնտեսագետ է, տ.գ.դ., «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի պրոֆեսոր, **Սեդա Սարգիսի Նասիբյանը**[12] տնտեսագետ է, տ.գ.թ., դոցենտ, ժողտնտեսության ակադեմիայի ֆինանսներ և բանկային գործ ֆակուլտետի դեկան, **Հարություն Հարությունի Խաչատուրյանը**[13] տնտեսագետ է, տ.գ.դ., պրոֆեսոր, ՌԲԳԱ թղթակից անդամ, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի տնտեսագիտական տեսությունների ամբիոնի պրոֆեսոր, **Էդուարդ Հովհաննեսի Ծատուրյանը**[14] տնտեսագետ է, տ.գ.թ., պրոֆեսոր, **Արթուր (Արտաշես**[15]**) Զավենի Արսենյանը**[16] իրավագետ է, ի.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ նախագահին առընթեր ժողտնտեցության և պետական ծառայության ռուսական ակադեմիայի տարածաշրջանային քաղաքականության բաժանմունքի տնօրեն:

Ընդհանուր առմամբ, դիտարկված՝ գիտակրթական ոլորտի 52 մոսկվահայերից ամենաշատը՝ 13 հոգի, ներկայացնում են բժշկական, 9-ը՝ տնտեսագիտական, 8-ը՝ տեխնիկական, 4-ական՝ ֆիզմաթ և իրավունքի, 3-ական՝ արվեստի և փիլիսոփայության, 2-ական՝ պատմության և մանկավարժության, 1-ական՝ աշխարհագրության, քաղաքագիտության, երկրաբանության և գյուղատնտեսության ոլորտները: Հատկանշական է, որ տեղի հայ համայնքին ավելի շատ հայտնի են «Նոյյան Տապան» թերթի 2011 թ. և

[1] Տե՛ս Абрамян А. С.: Энциклопедия «Известные Ученые» // https://bit.ly/30RHsXt, 22.04.2019.
[2] Տե՛ս Мецатунян М. В.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2WdcL01, 22.04.2019.
[3] Տե՛ս Нахатакян Ф. Г.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2Ww32RR, 22.04.2019.
[4] Տե՛ս Оганджанян Г. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2JLsqwV, 22.04.2019.
[5] Տե՛ս Чобанян В. А.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2HJLnhq, 22.04.2019.
[6] Տե՛ս Атанасян С. Л.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2MdvvrQ, 22.04.2019.
[7] Տե՛ս Геворкян П. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2YSYQJG, 22.04.2019.
[8] Տե՛ս Кансузян Л. В.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2I2LbZw, 23.04.2019.
[9] Տե՛ս Геворкян Е. Н.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2YO8KMk, 23.04.2019.
[10] Տե՛ս Давтян М. А.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2Qw3zOd, 23.04.2019.
[11] Տե՛ս Мхитарян В. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2MdfvpS, 23.04.2019.
[12] Տե՛ս Насибян С. С.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2HGj0R5, 23.04.2019.
[13] Տե՛ս Хачатурян А. А.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2MdUXgZ, 23.04.2019.
[14] Տե՛ս Цатурян Э. О.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2QvNbNR, 23.04.2019.
[15] Տե՛ս Департамент региональной политики РАНХиГС // URL: https://bit.ly/2JMnI2c, 23.04.2019.
[16] Տե՛ս Арсенян А. З.: Энциклопедия «Известные Ученые» // URL: https://bit.ly/2M9iqQ3, 23.04.2019.

2013 թ. ներկայացրած Ռուսաստանի հայտնի 100 հայերի ցանկում հայտնված գիտակրթական ոլորտի մոսկվահայերը, որոնց, ինչպես տեսանք, ընտրել են միջհամայնքային քվերակության արդյունքում, փոխարենը նույն համայնքին համեմատաբար անհայտ են մնում ՌԲԳԱ «Հայտնի գիտնականներ» համացանցային հանրագիտարանի ներկայացրած մոսկվահայ գիտնականները: Հետաքրքիր է նաև, որ համայնքում առավել հայտնի մոսկվահայ գիտնականների մեծամասնությունը տեղ չի գտել Ռուսաստանի գիտակրթական շրջանակներին ծանոթ հիշյալ համացանցային հարթակում:

Մեր դիտարկումները ցույց են տալիս Մոսկվայում գիտակրթական ոլորտում կայացած և տեղի հայության մեծամասնությանը անծանոթ մեծ թվով հայերի՝ համայնքային կյանքում ունեցած պասսիվ դերակատարությունը: Երևույթը, ցավոք, խանգարում է համայնքի մտավոր, կազմակերպչական ներուժի քանակական և որակական աճին: Ավելին, այն գալիս է փաստելու, որ Մոսկվայի հայ համայնքը լիարժեքորեն փոխկապակցված չէ իր այն հայրենակիցների հետ, ովքեր կարողացել են ներգրավվել քաղաքի ու նաև պետության գիտակրթական ոլորտում: Խնդիրը, որը նաև ժամանակակից Սփյուռքի մարտահրավերներից մեկն է, ոչ միայն համայնքային կառույցների, այլ նաև ՀՀ պատկան պետական մարմինների համար մտորումների նյութ պետք է դառնա՝ մշակելու հիշյալ հայրենակիցներին համայնքային և հայաստանյան ծրագրերին մասնակից դարձնելու ծրագրեր:

Нина Седракян, О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ВОВЛЕЧЕНИЯ АРМЯН В МОСКОВСКУЮ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНУЮ СФЕРУ (2010-2017). Наши соотечественники внесли и сейчас вносят большой вклад в научно-образовательную сферу Москвы, который имеет общероссийское значение. В рамках доступных нам источников освещается участие последних в научно-образовательной сфере Москвы. Объектом данного исследования являются московские армяне, представляющие эту сферу в 2000-х годах. Был проведен сравнительный анализ между данными предоставленными газетой «Ноян Тапан» и сетевой энциклопедией Российской Академии Естествознания «Известные Ученые», которые являлись основными источниками исследования.

Ключевые слова: московские армяне, Москва, Российская Федерация, диаспора, наука, образование, сфера, учёные, социокультурная вовлеченность, перепись.

Nina Sedrakyan, ON SOME ISSUES OF THE INVOLVEMENT OF ARMENIANS IN THE MOSCOW SCIENTIFIC AND EDUCATIONAL SPHERE (2010-2017). Our compatriots have made and now make a great contribution to the scientific and educational sphere of Moscow, which has an all-Russian significance. Within the framework of the available sources we their cover recent participation in the scientific and educational sphere of Moscow. The object of this study is the Moscow Armenians, representing this sphere in the 2000s. A comparative analysis was conducted between the data provided by the «Noyan Tapan» newspaper and the network's encyclopedia of the Russian Academy of Natural Sciences «Famous Scientists», which were the main sources of research.

Key words: Moscow Armenians, Moscow, Russian Federation, Diaspora, science, education, sphere, scientists, socio-cultural involvement, census.